Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ

ՌՈՒԶԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Սեպտեմբերի 17-22ը Երեւանում անցկացուեց համաժողով նուիրուած ազգամիջեան ընդհարումների կարգաւորման իրաւական, քաղաքական եւ բարոյական կողմերին: Համաժողովն ընդգրկուած էր Եւրոպայի անվտանգութեան համագործակցութեան խորհրդակցութեան մարդու իրաւունքներին նուիրուած Մոսկովեան միջազգային խորհրդաժողովի միջոցառումների ծրագրում:

Համաժողովի կազմակերպիչներն էին Հայաստանի Հանրապետութեան «Հայաստանի բարեկամներ միաւորում» ռուս մշակոյթի ընկերութիւնը (Երեւան) եւ Ղարաբաղի հայ ազգաբնակչութեան իրաւունքների պաշտպանութեան անկախ ընկերակցութիւնը (Մոսկուա):

Համաժողովի աշխատանքներին մասնակցում էին քաղաքական եւ հասարակական կուսակցութիւնների յայտնի գործիչներ, գիտութեան բնագաւառի աշխատողներ, ԽՍՀՄ, հանրապետական, երկրի քաղաքային եւ շրջանային խորհուրդների, Մոսխորհրդի եւ Լենխորհրդի պատգամաւորներ, յայտնի իրաւապաշտպաններ: Համաժողովի աշխատանքներին մասնակցեցին նաեւ Կոլումբիայի համալսարանի մարդու իրաւունքների ուսումնասիրման կենտրոնի համատնօրէն, պրոֆեսոր Պիտեր-Հենրի Ջուվիլեռը ԱՄՆ-ից եւ «Նովի գումանիզմ» ամսագրի գլխաւոր խմբագիր Գէորգի Կրասովսկին Ֆրանսիայից:

Համաժողովի հիմնական նպատակն էր նպաստել երկրում ազգամիջեան կոնֆլիկտների կարգաւորման եւ մարդու իրաւունքների միջազգային հսկողութեան ամրապնդման մեխանիզմների որոնմանը:

Համաժողովի ծրագրում կարեւոր տեղ յատկացուեց Լեռնային Ղարաբաղում արիւնահեղութեան դադարեցման, պատմական բնակավայրերից հայ ազգաբնակչութեան բռնի տեղահանման, ահաբեկչութիւնների կանխման միջոցների մշակման հարցերին մշակման հարցերին: Նշուեց, որ անհրաժեշտ է ստեղծել նախադրեալներ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հասարակական եւ իրաւական լայն ճանաչման համար, որը երաշխիք կը հանդիսանայ մարդու իրաւունքների պաշտպանութեան եւ դեմոկրատիայի զարգացման:

Համաժողովի մասնակիցները 1991թ. Սեպտեմբերի 2ի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակումն արձանագրեցին որպէս Լեռնային Ղարաբաղի բնակչութեան մեծամասնութեան կամքի արտայայտութիւն, որը հաստատուել է դեռեւս 1987-88թթ. հանրաքուէի արդիւնքներով: ԼՂՀն հռչակումը ժողովուրդների ինքնորոշման իրաւունքի իրականացումն է, որն ամրագրուած է միջազգային իրաւական փաստաթղթերում եւ համապատասխանում է վերջին ժամանակներս մեր երկրում ընթացող դեմոկրատական պրոցեսների ոգուն, որի շրջանակներում շատ աւտոնոմիաներ բարձրացրեցին իրենց պետական կարգավիճակը: Բացի դրանից նշուեց, որ ԼՂՀի հռչակումը չի հակասում Ադրբեջանի Հանրապետութեան անկախութեան հռչակագրին, քանի որ վերջինս վերականգնում է իր անկախութիւնը 1918թ. պետականութեան շրջանակներում, երբ Լեռնային Ղարաբաղը չէր գտնւում Ադրբեջանի կազմում:

Գտնելով, որ ԼՂՀի ճանաչումը ուղի է հարթում ԼՂՀի ու Ադրբեջանի Հանրապետութեան միջեւ կոնֆլիկտային բոլոր հարցերի շուրջ իրաւահաւասար բանակցութիւնների անցկացման:

Յիշեցնելով, որ քաղաքացիական եւ քաղաքական, սոցիալական եւ մշակութային իրաւունքների մասին միջազգային համաձայնագրերը պարտաւորեցնում են կառավարութիւններին խրախուսելու ժողովուրդների ինքնորոշման ձգտումները:

Ընդգծելով, որ ԽՍՀՄ եւ Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարներն իրենց քաղաքականութեամբ օժանդակեցին կոնֆլիկտի սրմանը եւ դրանով իսկ անհնարին դարձրին Ադրբեջանի հանրապետութեան սահմաններում ԼՂՀի հայ ազգաբնակչութեան իրաւունքների պաշտպանութիւնը եւ ազգային ինքնապահպանումը, համաժողովն ընդունեց բանաձեւ ճանաչելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Միաժամանակ որոշուեց, համաժողովի մասնակից ժողովրդական պատգամաւորների միջոցով անկախ հանրապետութիւնների Գերագոյն Խորհուրդների, Պետական Խորհրդի եւ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի առաջ հարց բարձրացնել պաշտօնապէս ճանաչելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը, որպէս իրաւունքի անկախ սուբյեկտ: Դիմել պառլամենտներին եւ կառավարութիւններին, միջազգային կազմակերպութիւններին, համաշխարհային հասարակութեանը օժանդակելու ԼՂՀի միջազգային ճանաչմանը:

Սեպտեմբերի 19-20ը համաժողովի մի խումբ պատգամաւորներ եղան Շահումեանի շրջանում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Նրանք զրոյցներ ունեցան տեղի բնակչութեան, հայ փախստականների, ինքնապաշտպանութեան ջոկատների մարտիկների հետ: Լսելով համաժողովի պատգամաւորների հաշուետուութիւնները, ծանօթանալով փաստացի նիւթերին եւ բազմաթիւ վկայութիւններին, համաժողովն արձանագրեց, որ Ադրբեջանի կառավարութիւնը վարում է իրենց պատմական հողերից հայերի բռնի տեղահանման քաղաքականութիւն, հողեր, որոնք 1921թ. Յունիսի 5ի ՌԿԿ Կովկասեան բիւրոյի որոշմամբ միացուեցին նորաստեղծ Ադրբեջանական ԽՍՀ-ին: Սպանութիւնները, բռնի տեղահանութիւնները, հայկական բնակավայրերի զինուած շրջափակումները, տեղի բնակչութեանը կեանքի կենսական պայմաններից զրկելը, Ադրբեջանի բանտերում հայազգի կալանաւորների, նկատմամբ դաժան վերաբերմունքը եւ հետապնդումների բազմաթիւ այլ ձեւերն իրականացւում են ելնելով զուտ ազգային պատկանելութիւնից: Ադրբեջանի վարած քաղաքականութիւնը նպաստում է ադրբեջանցիների կողմից Լեռնային Ղարաբաղի հարկադրական գաղութացմանը, որն անյաղթահարելի արգելքներ է ստեղծում ոչ միայն այլ վայրերից հայերի այնտեղ բնակութեան հաստատման, այլեւ տեղի բնակչութեան վերադարձի եւ Լեռնային Ղարաբաղ իրենց ազգականներին հայերի ժամանակաւոր այցելութեան համար:

Հաշուի առնելով այս անօրինական գործողութիւնները, համաժողովն ընդունեց բանաձեւ, որտեղ մասնաւորապէս ասւում է, որ Ադրբեջանն աշխարհում միակ երկիրն է, որտեղ շարունակւում է բացայայտօրէն եւ հետեւողականօրէն իրականացուել ռասայական խտրականութեան եւ ցեղասպանութեան քաղաքականութիւն, որն անվերապահօրէն դատապարտւում է համաշխարհային համագործակցութեան կողմից:

Ընդգծելով այս փաստը եւ հիմնուելով համաշխարհային պրակտիկայում նմանօրինակ նախադէպերի վրա, համաժողովը կոչ է անում աշխարհի բոլոր պետութիւններին եւ նախկին ԽՍՀՄի անկախ հանրապետութիւններին մորատորիում յայտարարել Ադրբեջանին մինչեւ նրա կողմից հայ ազգաբնակչութեան նկատմամբ ռասայական խտրականութեան եւ ցեղասպանութեան քաղաքականութեան դադարեցումը:

Համաժողովը դիմում է ՄԱԿի անդամ պետութիւններին, առաջին հերթին Անվտանգութեան Խորհրդի մշտական անդամներին, ինչպէս նաեւ Ուկրաինային, Բելոռուսիային, խնդրանքով՝ ՄԱԿի համապատասխան ատեաններում հարց բարձրացնել Ադրբեջանի Հանրապետութեան նկատմամբ միջազգային սանկցիաներ կիրառելու համար: Համաժողովն անհրաժեշտ գտաւ յիշեցնելու, որ մի հանրապետութիւն, որտեղ պետական քաղաքականութիւն է դարձել մարդու իրաւունքների ոտնահարումը չի կարող դառնալ որեւէ դեմոկրատական միութեան անդամ:

Համաժողովը նշեց, որ այս բոլոր անօրինակութիւնները (որոնք կատարւում են երբեմն առանձնակի դաժանութեամբ) իրականացուել են միութենական զօրքերի եւ ադրբեջանական միլիցիայի յատուկ ջոկատների (ՕՄՕՆ) ուժերով: Համաժողովում ընդունուած ընդհանուր հռչակագրում արձանագրուեց, որ իրադրութեան կայունացման համար անհրաժեշտ է դուրս բերել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տարածքից միութենական բանակի եւ Ադրբեջանական ՕՄՕՆի զօրքերը, պատասխանատուութեան կանչել բռնութիւնները իրագործողներին, միեւնոյն ժամանակ համաժողովն անհրաժեշտ է համարում դիմել ԽՍՀՄ Պաշտպանութեան նախարարին յամառօրէն պնդելով կազմացրել 4րդ բանակի 23-րդ դիվիզիան, որի վրայ է ընկնում գիւղերի վրայ կատարուած յարձակումների եւ հայ բնակչութեան բռնի տեղահանման պատասխանատուութիւնը: Այս տեսակէտից օրինական համարել ԼՂՀի տարածքում հայ ինքնապաշտպանութեան ջոկատների գոյութիւնը:

Նուիրուած լինելով մարդու իրաւունքների պաշտպանութեանը համաժողովը չէր կարող շրջանցել պատանդների եւ ձերբակալուածների հարցը: Համաժողովին ներկայացուեցին ադրբեջանական կողմից վերցուած հայ պատանդների, Ադրբեջանի ազատազրկման վայրերում գտնուող հայ կալանաւորների ցուցակներ, նրանց հարազատների դիմումները, տրուեցին վկայութիւններ ադրբեջանական բանտերում տանջանքների մասին, ինչպէս կեղծ ցուցմունքներ ստանալու, այնպէս էլ բացառապէս ազգային պատկանելութեան համար: Համաժողովի մասնակիցներն դա որակեցին որպէս քաղաքական հայեացքների համար հետապնդումների դասական օրինակ, որը դատապարտւում է Միջազգային Իրաւունքով: Համաժողովը դիմեց համաշխարհային եւ միութենական իրաւապաշտպան կազմակերպութիւններին հետեւեալ կոչով.

«Պահանջել Ադրբեջանի իրաւապահ մարմիններից ներկայացնելու լրիւ ցուցակը բոլոր բանտարկուածների, նշելով նրանց տեղը, առողջական վիճակը, ներկայացուած մեղադրանքը:

«Ներկայացնել ազատազրկման վայրերում կամ ձերբակալման ժամանակ մահացած հայ կալանաւորների ցուցակը, նշելով մահուան պատճառը եւ թաղման վայրը:

«Ապահովել բժիշկների մուտքը ձերբակալուածների մօտ, բժշկական վկայութիւններ տալու համար:

«Ապահովել անկախ իրաւաբանների մուտքը ձերբակալուածների մօտ, որի իրատւունքը գործող օրէնքներով թոյլատրուած է:

Ձերբակալուածներին ազատելու նպատակով բանակցութիւնների մէջ մտնել ադրբեջանական կողմի հետ: Հասնել այն բանին, որ այն ձերբակալուածներին, որոնց վրայ դատական գործ է յարուցուած՝ տեղափոխեն Ռուսաստանեան Ֆեդերացիայի կամ այլ հանրապետութեան քննչական մեկուսարաններ, իսկ նրանց գործերը յանձնուեն ՌԽՖՍՀ դատական եւ քննչական մարմիններին:

Համաժողովը դիմեց ԽՍՀՄ եւ Ռուսաստանեան Ֆեդերացիայի դատախազութիւններին հետաքննութիւն անցկացնել Ադրբեջանում ցեղասպանութեան բոլոր փաստերի վերաբերեալ սկսած 1988թ. փետրուարից:

Համաժողովում ծաւալուն քննարկում ստացաւ փախստականների պրոբլեմը: Ընդունուած բանաձեւում ընդգծուեց, որ անհրաժեշտ է գործող Միջազգային Իրաւունքին համապատասխան, ընդունել օրէնք փախստականների կարգավիճակի մասին: Հայաստանի Հանրապետութեան ԳԽ նիստերից մէկում հանգամանօրէն քննարկել փախստականների պրոբլեմը, ստեղծել փախստականների օգնութեան ֆոնդ, պետական մակարդակի վրայ բարձրացնել փախստականներին հայրենի սովորեցնելու խնդիրը, որը պէտք է արուի բարեգործական հիմունքներով: Դիմել Հայաստանի Հանրապետութիւնում կազմակերպել Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ կապուած նիւթերի հրատարակում եւ դրանց տարածում հանրապետութեան սահմաններից դուրս:

Համաժողովում որոշում ընդունուեց Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի էութեան եւ նրա ակունքների մասին հասարակայնութեանն օբյեկտիւ ինֆորմացիա տալու նպատակով ստեղծել «պատմա-իրաւական յանձնաժողով», քանի որ, ինչպէս նշեցին համաժողովի մասնակիցները, կայ աղաղակող անհամապատասխանութիւն իրականութեան եւ զանգուածային լրատուութեան միջոցների կողմից տրուած ինֆորմացիայի միջեւ:

Վերջում ընդունուեց որոշում սկսած աշխատանքները շարունակելու համար ներկայ համաժողովը համարել մշտական գործող հասարակական կազմակերպութիւն, իսկ միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնների մասնակցութիւնն աւելի ակտիւ եւ արդիւնաւէտ դարձնելու նպատակով որոշուեց Երեւանում ստեղծել Երեւանի Հելսինկեան խումբ եւ դիմել բոլոր իրաւապաշտպան կազմակերպութիւններին աջակցելու նրա գործունէութեանը:

Համաժողովի աշխատանքների ամփոփումը եղան Ընդհանուր Հռչակագրի եւ նշուած բանաձեւերի ընդունումը, որոնցում կոչ էր արւում համաշխարհային եւ միութենական հասարակայնութեանը իրենց բողոքի ձայնը բարձրացնելու ընդդէմ այդ յանցագործութիւնների եւ արգելելու շրջանում բռնութիւնների հետագայ ուժեղացմանը:

Համաժողովի ընդունած որոշումները եւս մի քայլ էին ծառայելու մարդու իրատւունքների եւ դեմոկրատիայի հետագայ զարգացմանը: Արուեց եւս մի քայլ խորհրդային եւ համաշխարհային հասարակայնութեանը ծանօթացնելու, օբյեկտիւ ինֆորմացիա տալու Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի մասին, միջազգային քաղաքական եւ հասարակական կազմակերպութիւնների ուշադրութիւնը հրաւիրելու, աջակցելու այդ պրոբլեմի լուծմանը: